ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Կենսաբժշկության և դեղագործության Ինստիտուտի տնօրեն
Ա.Ա. Առաքելյան
«11» հունիսի 2024__ թ.

Ինստիտուտ՝ Կենսաբժշկության և դեղագործության
Ամբիոն՝ Ընդհանուր և դեղագործության

Հեղինակ՝ Հրանուշ Ֆելիքսի Մելքոնյան

տեխ.գիտ.թեկնածու, դոցենտ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Կենսագործունեության անվտանգություն

Բակալավրի կրթական ծրագիր

Դասիչ մասնագիտութուն՝ Իրավագիտություն, քաղաքագիտություն, միջազգային հարաբերություններ, զբոսաշրջություն, կառավարում, ֆինանսներ, լրագրություն, բանասիրություն, արաբագիտություն, իրանագիտություն, թուրքագիտություն, արդի ֆինանսական մաթեմատիկա (առկա ուսուցում)

Դասընթացի անոտացիան

«Կենսագործունեության անվտանգություն» դասընթացն ուսումնասիրում է յուրաքանչյուր մարդուն սպառնացող ընդհանուր վտանգները և մշակում ցանկացած պայմաններում դրանցից պաշտպանվելու ուղիներ: Այս դասընթացը ուսումնասիրում է անվտանգության հիմնախնդիրները մարդու կենսագործունեության բոլոր ասպեկտներում՝ սկզբունքներ, մեթոդներ և սարքեր, որոնք օգտագործվում են աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար, վնասվածքների և մասնագիտական հիվանդությունների կանխարգելման համար անհրաժեշտ մեթոդներ, համակարգեր և սարքեր, ինչպես նաև բնական, տեխնածին և սոցիալական բնույթի արտակարգ իրավիճակների կանխատեսում, կանխարգելում և հետևանքների վերացում:

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի նպատակն է՝

- ապագա մասնագետների մոտ ձևավորել մասնագիտականմտածողություն, ինչպես նաև տիրապետել «բնություն-մարդ-հասարակություն» և «մարդ-արտակարգ իրավիճակ» համակարգերի վերլուծության հմտությունների՝ օպտիմալ անվտանգ փոխգործակցություն կազմակերպելու և մարդու կենսագործունեությանը հասցված վնասը վերացնելու կամ նվազագույնի հասցնելու որոշումներ կայացնելու համար;
- ձևավորել մարդկանց առօրյա կյանքում առկա վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության նկատմամբ լուրջ վերաբերմունք, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելում և դրանցից կրած վնասների նվազեցում;

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խդիրները.

- ուսանողներին զինել տեսական գիտելիքներով և գործնական հմտություններով վնասվածքներից և մասնագիտական հիվանդություններից պաշտպանվելու համար;
- ուսանողների մոտ ձևավորել արտակարգ իրավիճակների մասին պատկերացում, արտակարգ իրավիճակներում գործելու հմտություններ;
- ուսանողների մոտ ձևավորել փրկարարական աշխատանքների վերաբերյալ հմտություններ և տարաբնույթ պատահարների ժամանակ հնարավոր վնասվածքների և

այլ ախտահարումների դեպքում առաջին բուժօգնության ցուցաբերման անհրաժեշտ կարողություններ:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտն է՝

- անվտանգության համակարգերը՝ աշխատանքային և կյանքի ոլորտներում;
- անհատները՝ որոնք ենթարկվում են տարբեր վտանգների և ռիսկերի;
- միջավայրը՝ անվտանգության ապահովելու միջոցները ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:

Դասընթացի առարկան է՝

- անվտանգության սկզբունքներ՝ բնական, մարդածին և տեխնածին վտանգների կառավարում;
- առողջության պահպանման տեխնոլոգիաներ՝ աշխատավայրում և առօրյա կյանքում;
- առաջին օգնության տրամադրում՝ վնասվածքների և իրավիճակների դեպքում;
- կառավարման ռազմավարություններ՝ ռիսկերի նվազեցման և անվտանգության մշակույթի ձևավորման համար:

Դասընթացի մուտքային պահանջները

«Կենսագործունեության անվտանգություն» դասընթացի ուսումնասիրությունը հիմնված է «Ընդհանուր ֆիզիկա», «Ընդհանուր քիմիա», «Ընդհանուր կենսաբանություն» դպրոցական դասընթացի ընթացքում ձեռք բերված հիմնական գիտելիքների վրա, որը լրացվում է ԲՈՒՀ-ում դասավանդվող «Վալեոլոգիա», «Ժամանակակից բնական գիտությունների հայեցակարգեր», ինչպես նաև սոցիալ-տնտեսական, հանրակրթական և այլ առարկաների:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

1. Արտակարգ իրավիճակներում գործող իրավական համակարգի կառուցվածքի և գործառույթների, դրա և՛ քաղաքական ու տնտեսական համակարգերի փոխազդեցության, և՛ մարդու իրավունքների վերաբերյալ հիմնարար գիտելիք։
2. Արտակարգ իրավիճակներում մարդու իրավունքի ընկալման հիմնական հայեցակարգերի, իրավաստեղծման, իրավաբանական տեխնիկայի և տեսությունների վերաբերյալ հիմնարար գիտելիք։

Հմտությունները՝

- ***գիտելիքի կիրառման հմտությունները՝***

1. Կարող է կիրառել մասնագիտական գիտելիքներն արտակարգ իրավիճակներում առավել հաճախ հանդիպող իրավական խնդիրների լուծման համար։
2. Կարող է բանակցություններ վարել, ներկայացնել ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետության և համայնքի իրավունքներն ու օրինական շահերը։

- ***ընդհանրական իմացական հմտությունները՝***

1. Կարող է դրսևորել քննական և փաստարկված վերլուծական մոտեցում՝ իրավական խնդիրները բացահայտելու և դրանց լուծման ուղիները մշակելու համար։
2. Կարող է մասնագիտական խնդիրները բացահայտելիս և լուծումներ առաջադրելիս ցուցաբերելնախաձեռնողականություն և ստեղծագործական մոտեցում։

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- ***ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝***

1. Ունակ է՝ ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարմաններքո ծավալելու լիարժեք մասնագիտականգործունեություն։
2. Ունակ է՝ ուսումնառության և (կամ) աշխատանքի ընթացքում կատարելու առաջադրանքներ, ցուցաբերելու անհրաժեշտ ինքնուրույնություն և ստանձնելու պատասխանատվություն մասնագիտական որոշումներ կայացնելիս։

Դասավանդման եղանակները և մեթոդները

- Դասախոսություն, մեթոդական և գործնական պարապմունք
- Անհատական և ինքնուրույն աշխատանքներ
- Թեմատիկ ուսումնական խաղեր, ուսումնական տեսաֆիլմերի ցուցադրում:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Ι. Կրթաբլոկ (Ընդհանուր հումանիտար և սոցիալական դասընթացների կրթաբլոկ)»՝ 2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2024-2025 ուսումնական տարվա Ι կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**72**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**34**
1.1.1. Դասախոսություններ	**18**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**16**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**38**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**72**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1. Ներածություն	2	1	1
Թեմա 2. Աշխատանքային միջավայր և կենսագործունեության անվտանգություն	2	1	1
Թեմա 3. Արտադրական տարածքների միկրոկլիմայական պայմաններ	2	1	1
Թեմա 4. Վիբրացիայից և աղմուկից պաշտպանություն	4	2	2
Թեմա 5. Քիմիական վտանգավոր նյութեր	4	2	2
Թեմա 6. Ճառագայթային անվտանգություն	4	2	2
Թեմա 7. Պաշտպանություն լազերային ճառագայթումից և էլեկտրամագնիսական դաշտերից	6	4	2
Թեմա 8. Էլեկտրական վնասվածքներ	2	1	1
Թեմա 9. Վարակիչ հիվանդություններ	4	2	2
Թեմա 10. Կենսագործունեության անվտանգությունը արտակարգ իրավիճակներում	4	2	2
Ընդամենը	**34**	**18**	**16**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Ներածություն

Դասընթացի առարկան և բովանդակությունը, դրա նպատակները, խնդիրները և կապերը մասնագիտության այլ առարկաների հետ: Աշխատանքի ֆիզիոլոգիայի հիմունքները և հարմարավետ կենսապայմանները տեխնոլորտում: Անհաջողություն, ձախողման հավանականություն, ռիսկի որակական և քանակական վերլուծություն: Անվտանգություն արտակարգ իրավիճակներում: Կառավարման իրավական և կարգավորող-տեխնիկական հիմունքները: Անվտանգության և շրջակա միջավայրի մոնիտորինգի համակարգեր: Միջազգային համագործակցություն կենսագործունեության անվտանգության ոլորտում:

Թեմա 2. Աշխատանքային միջավայր և կենսագործունեության անվտանգություն

Մարդ և շրջակա միջավայր: Տեխնոլորտ: Վտանգավոր և վնասակար գործոններ: Անվտանգության համակարգեր ըստ պաշտպանության օբյեկտների: Աշխատանքի անվտանգություն:

Թեմա 3. Արտադրական տարածքների միկրոկլիմայական պայմաններ

Միկրոկլիմայի հիմնական պարամետրեր: Օդի աղտոտվածությունը աշխատավայրում և դրա հետևանքները: Միկրոկլիմայի կարգավորման մեթոդներ և միջոցներ:

Թեմա 4. Վիբրացիայից և աղմուկից պաշտպանություն

Վիբրացիայի հիմնական աղբյուրները և դրանց բնութագրերը: Վիբրացիայի ազդեցությունը մարդկանց վրա և դրանց կարգավորման սկզբունքները: Պաշտպանիչ միջոցներ և մեթոդներ:

Աղմուկի, ենթաձայնի և անդրաձայնի հիմնական աղբյուրները և դրանց բնութագրերը: Աղմուկի, ենթաձայնի և անդրաձայնի ազդեցությունը մարդկանց վրա և դրանց կարգավորման սկզբունքները: Պաշտպանիչ միջոցներ և մեթոդներ:

Թեմա 5. Քիմիական վտանգավոր նյութեր

Քիմիական վտանգավոր նյութեր և դրանց դասակարգում: Վնասակար նյութերի ազդեցությունը մարդկանց վրա: Պաշպանիչ միջոցներ: Քիմիական վտանգավոր օբյեկտներ և դրանց բաժանում դասակարգումը: Քիմիական զենք: Դիոքսին:

Թեմա 6. Ճառագայթային անվտանգություն

Իոնացնող ճառագայթման հիմնական տեսակներն ու բնութագրերը: Իոնացնող ճառագայթման կենսաբանական ազդեցությունը մարդու մարմնի վրա և դրանց կարգավորման սկզբունքները: Պաշտպանիչ միջոցներ և մեթոդներ: Ռադիացիոն վտանգավոր օբյեկտներ: Չեռնոբիլի աղետը և դրա հետևանքները:

Թեմա 7. Պաշտպանություն լազերային ճառագայթումից և էլեկտրամագնիսական դաշտերից

Էլեկտրամագնիսական դաշտի հիմնական աղբյուրները և դրանց բնութագրերը: Էլեկտրամագնիսական դաշտի ազդեցությունը մարդկանց վրա: Կարգավորման սկզբունքները: Պաշտպանիչ միջոցներ և մեթոդներ:

Մշտական էլեկտրական և մագնիսական դաշտերի հիմնական աղբյուրները: Մարդկանց վրա էլեկտրական և մագնիսական դաշտերի ազդեցության առանձնահատկությունները և կարգավորման սկզբունքները: Պաշտպանիչ միջոցներ և մեթոդներ:

Ռադիոալիքների հիմնական աղբյուրները: Մարդկանց վրա ռադիոալիքների ազդեցության առանձնահատկությունները և կարգավորման սկզբունքները: Պաշտպանիչ միջոցներ և մեթոդներ:

Լազերային ճառագայթում: Պաշտպանիչ միջոցներ և մեթոդներ:

Ինֆրակարմիր, տեսանելի և ուլտրամանուշակագույն ճառագայթման աղբյուրներ: Ինֆրակարմիր, տեսանելի և ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցության առանձնահատկությունները և կարգավորման սկզբունքները: Պաշտպանիչ միջոցներ և մեթոդներ:

Թեմա 8. Էլեկտրական վնասվածքներ

Էլեկտրական վնասվածքներ: Մարդու մարմնի դիմադրողականություն: Առաջին բուժօգնություն էլեկտրական վնասվածքների դեպքում: Էլեկտրական վնասվածքների առաջացման պատճառները:

Թեմա 9. Վարակիչ հիվանդություններ

Վարակիչ հիվանդություններ: Փոխանցման մեխանիզմներ: Ջուրը՝ որպես վարակիչ հիվանդացության գործոն: Հողը որպես վարակիչ հիվանդությունների առաջացման հնարավոր պատճառ: Կենդանական ծագման սննդամթերքը՝ որպես վարակիչ հիվանդությունների առաջացման հնարավոր պատճառ: Գյուղատնտեսական կենդանիների հիվանդություններ,

էնզոոտիա, էպիզոոտիա, պանզոոտիա: Առաջին բուժօգնություն վարակիչ հիվանդությունների դեպքում: Արտակարգ իրավիճակներում բնակչության սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային ապահովում:

Թեմա 10. Կենսագործունեության անվտանգությունը արտակարգ իրավիճակներում

Արտակարգ իրավիճակներ: Արտակարգ իրավիճակների հետևանքների վերացում: Առաջին օգնություն տուժածներին:

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. Новиков В.Н., Башкиров А.А., Черняев С.И. Основы безопасности жизнедеятельности. Калуга: Манускрипт, 2005.
2. Алексеев В.С., Мурадова Е.О., Давыдова И.С. Безопасность жизнедеятельности. М.: Проспект, 2006.
3. Барачевский Ю.Е. Грошилин С.М. Основы мобилизационной подготовки здравоохранения: учебн. пособ. для студентов мед. вузов, Архангельск, 2011.
4. Белов С.В. Безопасность жизнедеятельности: Учебник для вузов / С.В. Белов, В.А. Девисилов, А.В. Ильницкая, и др. Под общей редакцией С.В. Белова, 8-е издание, стереотипное, М.: Высшая школа, 2009.
5. Медицинское обеспечение в чрезвычайных ситуациях: учебн. пособ. Т.1 / под ред. П.И. Сидорова, Архангельск: Северный государственный медицинский университет, 2008.
6. Медицинское обеспечение в чрезвычайных ситуациях: учебн. пособ. Т.2 / под ред. П.И. Сидорова, Архангельск: Северный государственный медицинский университет, 2008.
7. Михайлов Л.А. и др. Безопасность жизнедеятельности. Л.: Питер, 2005.
8. Муравей Л.А. и др. Экология и безопасность жизнедеятельности. М.: Мысль, 2000.
9. Сидоров П.И., Мосягин И.Г., Сарычев А.С. Медицина катастроф: учеб. пособ. для студ. мед вузов, М.: «Академия», 2010.

Լրացուցիչ գրականություն

1. Акимов В.А. Безопасность жизнедеятельности. Безопасность в чрезвычайных ситуациях природного и техногенного характера: Учебное пособие / В.А. Акимов, Ю.Л. Воробьев, М.И. Фалеев и др., М.: Высшая школа, 2007.
2. Левчук И.П., Третьяков Н.В. Медицина катастроф. Курс лекций: [учебное пособие для мед. вузов], М.: ГЭОТАР, 2011.
3. Михайлов Ю.М. Сборник инструкций по охране труда для работников медицины и фармацевтики / Ю.М. Михайлов, М.: «Альфа-Пресс», 2010.
4. Мобилизационная подготовка здравоохранения Учебн. пособ. / Под ред. чл. корр. РАМН, проф. И.М.Чижа. М: ГВКГ им. Н.Н. Бурденко, 2011.
5. Мосягин И.Г., Небученных А.А., Муравьев В.А. Организация медицинского снабжения формирований и учреждений, предназначенных для медико-санитарного обеспечения населения при чрезвычайных ситуациях, Архангельск: СГМУ, 2007.
6. Новиков В.Н., Алексеев Е.А. Повышение устойчивости объектов экономики и их элементов. Калуга: Облиздат, 2001.
7. Сафронов Г.А., Александров М.В., Головко А.И. и др. Экстремальная токсикология: учебник / Под ред. Г.А. Сафронова, М.В. Александрова, СПб.: ЭЛБИ-СПб, 2012.
8. Токсикология аварийно-опасных химических веществ (в таблицах) Учебное пособие / Под ред. О.В. Бабенко, М.: «Русский врач», 2007.
9. Травкин А.К. Пожарная безопасность в медицинских учреждениях. М.: Инфра-М, 2007.